

Биолог. журн. Армении, 1-2 (59), 2007

УДК 619.616.995.121-021.3

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ԷՒԽԻՆՈԿՈԿՈՉԸ ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԱԿԻՑ ՇՐՁԱՆՆԵՐՈՒՄ

Յ.Զ. ՆԱՂԱՇՅԱՆ, Վ.Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Վ.Բ. ԱՆԴՐԻԱՍՅԱՆ, Օ.Վ. ՇՇԵՐԱԿՈՎ, Ա.Ռ.
ՅԱԿՈԲՅԱՆ, Լ.Յ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայաստանի պետական ագրարային համալսարան, 0009, Երևան

Animal hydatidosis is an extremely distributed disease in Yerevan and its suburbs. Our research has shown that the dominant was an infestation of internal organs and hypodermal tissue of cattle by hydatids. The highest prevalence of hydatidosis in all animals has been registered in winter and spring.

Էխինոկոկոզ - լյարդ - բուշտ - ցեստոդ

Թրթուրային էխինոկոկոզը խրոնիկական ինվազիոն հիվանդություն է, որով հիմնականում վարակվում են գյուղատնտեսական և վայրի կենդանիները, ինչպես նաև մարդը:

Թրթուրային էխինոկոկոզի հարուցիչը *Echinococcus granulosus larvae*-ն է, որը տեղակայվում է կենդանիների բոլոր ներքին օրգաններում և հյուսվածքներում, հատկապես լյարդում և թոքերում, իսկ սեռահասուն որդը մսակերների բարակ աղիներում:

Թրթուրային էխինոկոկոզը անասնապահությանը պատճառում է զգալի տնտեսական վնաս, որն արտահայտվում է բոլոր տեսակի կենդանիների մթերատվության անկմամբ, մատղաշների աճի ու զարգացման դանդաղեցմամբ, իսկ մորթից հետո ախտահարված օրգանների խտտանմամբ: Անհրաժեշտ է ընդգծել, որ էխինոկոկոզով վարակված կենդանիների մսեղիքը կորցնում է իր սննդային արժեքը [1, 3]:

Ներկայումս էխինոկոկոզն աշխարհում ամենատարածված ինվազիոն հիվանդություններից մեկն է: Այս հիվանդությունը հանդիպում է նաև մեր երկրում [2, 4]: Էխինոկոկոզի տարածմանը նպաստում են թափառող և տնային պայմաններում պահվող շների գլխաքանակի կտրուկ աճը, առանց անասնաբուժասանիտարական փորձաքննության, պատահական վայրերում իրականացվող կենդանիների մորթը ու մսեղիքի վաճառքը և, որ ամենակարևորն է, ազգաբնակչության անտեղյակությունը էխինոկոկոզի վարակման ուղիների և հատկապես կանխարգելիչ տարրական կանոնների մասին:

Ելնելով վերոհիշյալից աշխատանքի նպատակն էր պարզաբանել Հայաստանի հարակից շրջաններից Երևան վաճառքի բերված տարբեր տեսակի գյուղատնտեսական կենդանիների մսեղիքի և ներքին օրգանների թրթուրային էխինոկոկոզի ախտահարվածության աստիճանը:

Լյուր և մեթոդ: Աշխատանքները կատարվել են 2003-2004թթ. Հայաստանի պետական ագրարային համալսարանի համաճարակաբանության և մակարոնաբանության ամբիոնում: Ընկերները վերցվել են երևանի թիվ 1 և 2 շուկաներից, ուր մտեղիքը հիմնականում բերվում է քաղաքին հարակից՝ Արմավիրի, Արարատի, Արագածոտնի և Կոտայքի տարածաշրջաններից: Կենդանիների մսեղիքում և ներքին օրգաններում էփսինոկոկի բշտեր հայտնաբերելու նպատակով կատարվել է դիտում և շոշափում, իսկ որոշ դեպքերում՝ խորը կտրվածքներ: Հետազոտվել է ներքին օրգանների 176 նմուշ: Հաշվի է առնվել բշտերի մեծությունը, նրանց մեջ պարունակյալի առկայությունը, օրգաններում ու հյուսվածքներում նրանց տոկոսային քանակությունը, ինչպես նաև կենդանատեսակը և տարվա եղանակը:

Արդյունքներ և քննարկում: Կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ երևանի հարակից շրջաններում (Արմավիրի, Արարատի, Կոտայքի, Արագածոտնի մարզեր) գյուղատնտեսական կենդանիների էփսինոկոկոզը բավական տարածված հիվանդություն է, որը պայմանավորված է գյուղական վայրերում և տնտեսությունների տարածքում մեծ թվով թափառող շների առկայությամբ, իսկ մյուս կողմից՝ արոտավայրերի, ինչպես նաև կենդանիների կերակրման նկատմամբ անասնաբուժասանիտարական հսկողության բացակայությամբ: Ամենակարևոր հանգամանքը այն է, որ գյուղական բնակավայրերի բնակչությունը, և հատկապես անասնապահությամբ զբաղվող անձիք, տեղեկացված չեն էփսինոկոկոզով վարակման ճանապարհների, և կանխարգելիչ միջոցառումների մասին:

Ներքին օրգանների հետազոտման ժամանակ պարզվել է, որ տավարի մոտ էփսինոկոկոզով հիմնականում ախտահարվում են թոքերը (50%), այնուհետև լյարդը (32%), իսկ այդ տեսակի կենդանիների մոտ թոքերի և լյարդի համատեղ ախտահարումը կազմում էր 25%:

Ոչխարների մոտ թոքերի էփսինոկոկային ախտահարումը կազմում էր 25%, իսկ լյարդինը՝ 20%: Նշված կենդանատեսակի մոտ թոքերի և լյարդի համատեղ ախտահարումը կազմում էր 15%: Ոչխարների մոտ էփսինոկոկի բշտեր հայտնաբերվել են նաև երիկամներում (4 դեպք) և սրտում (1 դեպք):

Խոզերի մոտ էփսինոկոկի բշտերը հիմնականում հայտնաբերվում է լյարդում և փայծաղում, իսկ ախտահարվածությունը կազմում է 15%:

Հատկանշական է, որ բոլոր տեսակի կենդանիների մոտ էփսինոկոկոզով ախտահարված ներքին օրգանները ծավալով մեծացած էին, իսկ պարենքիման ապաճած: Նրանցում հայտնաբերվել են տարբեր մեծության և զարգացման աստիճանում գտնվող մեկ կամ մեկ տասնյակի հասնող բշտեր:

Միաժամանակ որոշվել է նաև մսեղիքի էփսինոկոկոզով վարակվածության աստիճանը՝ կախված տարվա եղանակներից: Հայտնաբերվել է, որ աշնանը բոլոր տեսակի գյուղատնտեսական կենդանիների վարակվածությունը կազմում է 20%, մինչդեռ ձմռան և գարնան ամիսներին այն ավելանալով հասնում է 30 – 35%: Ձմռան և գարնան ամիսներին ախտահարման այսպիսի բարձր տոկոսները հավանաբար պայմանավորված են նրանով, որ ամռանը և աշնանը էփսինոկոկոզով վարակված կենդանիների մոտ ձմռան և գարնան ամիսներին բշտերը հասցնում են լիովին ձևավորվել, զարգանալ և հետազոտողի աչքի համար դառնալ ավելի լավ տեսանելի:

Անհրաժեշտ է ընդգծել, որ առաջին անգամ մեր կողմից էփսինոկոկի բշտեր պատահականորեն հայտնաբերվել են նաև տավարի ենթամաշկային բջջանքում:

Այսպիսով, հետազոտությունների արդյունքում պարզվեց՝ էփսինոկոկոզ

հիվանդությունը բավականին տարածված է Երևանի հարակից շրջաններում, բարձր է այդ հիվանդության նոր տարածաշրջաններ ընդգրկելու հնարավորությունը, էխինոկոկոզի նման տարածվածությունը խիստ վտանգավոր է ազգաբնակչության առողջության համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Артеменко Ю.Г., Чикунова Л.И.* Бюллетень ВИГИС, вып. 44, 5-8, 1986.
2. *Давидянц В.А., Джамбазян М.П., Ермолин Г.А.* Ж. экспер. и клин. мед.АН Армении. 22, 3, 230-233, 1982.
3. *Скворцова Ф.К., Артеменко Ю.Г.* Бюллетень ВИГИС, вып. 47, 69-72, М., 1987.
4. *Чубарян Ф., Бояхчян Г., Петросян Р., Арутюнова Л.* Мат-ы региональной научн. конф. “Исследование и охрана животного мира Южного Кавказа”. Ереван, 165-166, 2003.

Поступила 05.III.2007